Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1034[1]-27.03.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 137.8-րդ հոդվածից հետո լրացնել նոր 137.9-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 137.9. Ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայությունից օգտվելու համար տեղական վճարը կամ փոխադրավարձը չվճարելը

1. Ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայություններից առանց սահմանված տեղական վճարը կամ միասնական ծառայության տեղական վճարը կամ փոխադրավարձը վճարելու կամ տրանսպորտային միջոցում առանց տեղական վճարի վճարման կրիչը վավերացում կատարելու օգտվելը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի.

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայություններից օգտվելու տեղական վճարի կամ միասնական ծառայության տեղական վճարի արտոնության կիրառմամբ այլ անձի կողմից նշված ծառայություններից օգտվելը.

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով:

3. Ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայությունների համար նախատեսված միասնական ծառայության տեղական վճարը որոշակի ժամանակահատվածում անսահմանափակ ուղևորությունների համար վճարված լինելու կամ տեղական վճարի զրոյական դրույքաչափի կիրառմամբ արտոնություն ստացած լինելու դեպքում ծառայությունից նույն ժամանակահատվածում առանց տրանսպորտային միջոցում վավերացում կատարելու օգտվելը.

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 219.1-ին հոդվածի 3-րդ մասում «114-րդ,» բառերից հետո լրացնել «137.9-րդ,» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «137.9-րդ,» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 259-րդ հոդվածի 1-ին մասում «անձը պարզելու,» բառերը փոխարինել «անձը պարզելու կամ» բառերով, իսկ «թույլատրվում են» բառերը փոխարինել «թույլատրվում է կատարել անձի նույնացում կամ» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 277-րդ հոդվածի 6-րդ մասից հետո լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 137.9-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվում են և որոշում է ընդունվում իրավախախտման հայտնաբերման պահին՝ առանց լսումներ հրավիրելու:»:

Հոդված 7. Օրենսգրքի 278-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 137.9-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է խախտման հայտնաբերման վայրում անմիջապես՝ սահմանափակվելով որոշման ընդունմամբ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 137.9-րդ հոդվածով, ինչպես նաև 224-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:»:

Հոդված9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: